ձերոց, և հաստատուն 'ի միտս, թէ ունիմ զոր ինչ որ ունիցիմ իմմէ և սովաւ կարող լինիցիք բաժանել ժամանակս կենաց ձերոց՝ երբեմն 'ի գործ, երբեմն աշխատանս, երբեմն յաղօթս, երբեմն խրախճանութիւնս, երբեմն ուսումնս և այլն սովաւ արժանաւորասցի մարդն մեր մէջ աշխարհին մերոյ, ոմն հեզ և խոնարհ վասն քահանայութեան, ոմն քաջ և աներկիւղ վասն զինուորութեան, ոմն ջանացող և աշխատող վասն հողագործութեան, ոմն արհեստակաւոր 'ի զանազան արհեստս վասն իմաստութեան, զի սովաւ մեք 'ի մէնջ մեր գտանել կարենամք ամենայն հարկաւորութիւն կարեաց մերոց, և գոցուք մեք մեզ իբրև մարդ 'ի պատուոյ, զի ըստ Օրինօք մերովք հովուելով մեզ արասցէ մեզ արժանի որդեգրութեան Արարչին մերոյ զի ամենայն արարած 'ի Տեառնէ 'ի յերեսս երկրի մերոյ հնազանդեսցի յիշխանութեան պատուոյն զօրութեան հոգւոյ մերոյ. որ յատկապէս Շնորհեցաւ մեզ 'ի Տեառնէ Արարչէն մերմէ և մեք լիցուք արժանի փառաց թագաւորելոյ 'ի վերայ նոցայ հնազանդելով մեք Օրինօք մերօք միայնոյ թագաւորին և Արարչին մերոյ յԱստուծոյ, որ ունի իշխանութիւն 'ի վերայ հոգւոյ և մարմնոյ և կենաց մերոց, զի նա միայն փառաւորեսցի թագաւորութեամբ իշխանութեամբ 'ի վերայ բնութեան և բանական հոգոյ մերոյ, քան զի նայ Արար